ԿՅԱՆՔԻ ԽՈՍՔԸ – ԱՍՏԾՈ ՇՈՒՆՉԸ

ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ.

Վաթսունվեց գիրք: Հազար հարյուր ութսունինը գլուխ: Գրված լինելով 1500 տարվա ընթացքում՝ Աստվածաշունչը շատ ավելին է, քան ընդամենը մի մեծ և հին գիրք. դրա էջերը կենսատու հայտնություն և զորություն են պարունակում, եթե մենք գիտենք, թե ինչպես այն կարդալ:

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 1.1-4

*1 Այն, որ սկզբից էր, որին լսեցինք և մեր աչքերով տեսանք, որին նայեցինք, և որին մեր ձեռքերը շոշափեցին, այսինքն՝ **կյանքի** **Խոսքի** մասին,*

Հովհ. 14.6 – Հիսուս ասում է. «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը»:

2 և կյանքը հայտնվեց, ու մենք տեսանք ու վկայում ենք և ձեզ պատմում ենք այդ հավիտենական կյանքի մասին, որ Հոր մոտ էր ու մեզ հայտնվեց. 3 այն, ինչ տեսանք ու լսեցինք, պատմում ենք ձեզ, որպեսզի դուք էլ մեզ հետ հաղորդակից լինեք, իսկ մեր հաղորդությունը Հոր ու նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի հետ է: 4 Եվ սա գրում ենք ձեզ, որպեսզի ձեր ուրախությունը կատարյալ լինի:

*2 Տիմ. 3.16-17 - 16 Աստծու **շնչով (Սուրբ Հոգով)** գրուած ամէն գիրք օգտակար է ուսուցման, հանդիմանութեան, ուղղելու եւ արդարութեան մէջ խրատելու համար. 17 որպէսզի կատարեալ լինի Աստծու մարդը եւ պատրաստ՝ բոլոր բարի գործերի համար:*

I. ԽՈՍՔԸ ԱՍՏԾՈՒ ՇՈՒՆՉՆ Է

θεόπνευστος՝ (Տիանուստոս) ***Աստծու շնչով լցված / ներշնչված*** *նշանակում է, որ խոսքը կենդանի է:*

*Հոգին է կյանք տվողը. մարմինը ոչ մի օգուտ չի տալիս: Այն **խոսքը**, որ ես ձեզ ասացի, **Հոգի է** ու **կյանք** (Հով. 6.63):*

Եվ Աստված ասաց. Մեր պատկերով ու մեր նմանությամբ մարդ արարենք... (Ծննդոց 1.26):

*Տեր Աստված մարդուն ձևավորեց հողի փոշուց և նրա ռունգերի մեջ կենդանության **շունչ փչեց**, և մարդը կենդանի հոգի եղավ (Ծննդոց 2.7):*

- ***Ինչպես Աստծո շունչը Ադամին կյանք տվեց (Ծնն. 2.7), այնպես էլ Սուրբ Գրքի միջոցով Աստված կյանք է տալիս մեռած սրտին:***

*Եվ նա ինձ ասաց. Մարգարեացի՛ր այս ոսկորների վրա և ասա՛ նրանց. **Ո՛վ չորացած ոսկորներ, լսե՛ք Տիրոջ խոսքը**: Տեր Աստված այսպես ասաց այս ոսկորներին. Ահա ես ձեր մեջ շունչ պիտի դնեմ, և դուք պիտի կենդանանաք: Եվ ձեր մեջ ջղեր պիտի դնեմ. ձեզ վրա միս պիտի բերեմ և ձեզ մորթով պատեմ, ձեր մեջ շունչ պիտի դնեմ, և դուք պիտի կենդանանաք: Եվ պիտի իմանաք, որ ես եմ Տերը (Եզեկիել 37.4-6)*

II. ԽՈՍՔԸ ՀՈԳԻ Է ՈՒ ԿՅԱՆՔ – ԿԵՆԴԱՆԻ Է և ԶՈՐԱՎՈՐ

*Կենդանի է **Աստծու խոսքն** ու ազդեցիկ և ամեն մի երկսայրի սրից առավել կտրուկ է. (Եբր. 4.12):*

- ***Այն թափանցում է մեր սրտի խորքերը, բացահայտում թաքուն մտքերն ու շարժառիթները:***

  *Ահա **իմ խոսքը** կրակի նման է,- ասում է Տերը,- և մուրճի պես, որ փշրում է ապառաժը (Երեմիա 23.29):*

  *Հիսուս պատասխանեց ու ասաց. Գրված է. Ոչ միայն հացով է մարդն ապրում, այլև այն ամեն խոսքով, որ **Աստծու բերանից է** ելնում (Մատթեոս 4.4):*

  *Եվ այդ ժամանակ կհայտնվի այն անօրենը, որին Տեր Հիսուսն իր **բերանի շնչով** (theopneustos) կսպանի ու իր գալստյան հայտնությամբ կկործանի (Բ Թես. 2.8):*

  Ահա օրեր են գալիս, – ասում է Տերը Աստվածը, – որ սով կուղարկեմ երկրի վրա, ոչ թե հաց ուտելու սով, ոչ էլ ջուր խմելու ծարավ, այլ Տիրոջ խոսքերը լսելու սով (Ամոս 8.11):

- ***Միայն Աստծո Խոսքն է, որ կարող է կշտացնել հոգին:***

III. ԽՈՍՔԻ ՎՐԱ ԽՈՐՀԵԼԸ ՄԵՐ ԶՈՐՈՒԹՅՈՒՆՆ Է

Այս օրենքի գիրքը թող չհեռանա քո շուրթերից, այլ գիշեր-ցերեկ դրա մասի՛ն մտածիր, որպեսզի պահես և կատարես ամենը, ինչ որ գրված է դրա մեջ. այն ժամանակ ճանապարհը դու հաջող կդարձնես և այն ժամանակ հաջողություն կունենաս (Հեսու 1.8):

- ***Խորհելը նշանակում է մտածել, աղոթել Խոսքը, մինչև որ այն դառնա մեր կյանքը:***

  Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որին Հայրը կուղարկի իմ անունով, նա ձեզ ամեն ինչ կսովորեցնի և կհիշեցնի ձեզ այն ամենը, ինչ ես ասացի ձեզ (Հովհաննես 14.26):

- ***Աստվածաշունչը կարդալը միայն մտքի գործ չէ, այլ նաև՝ Սուրբ Հոգու հետ հաղորդակցություն: Սուրբ Հոգին է Գրքի հեղինակը, որովհետև մարգարեները խոսեցին Սուրբ Հոգուց մղված (Բ Պետրոս 1.21):***

IV. ԽՈՍՔԸ ՈՒՆԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՓՐԿԵԼՈՒ և ԲԺՇԿԵԼՈՒ

Ուղարկեց իր խոսքը և բժշկեց նրանց և նրանց ազատեց իրենց կորստից (Սաղ. 107.20):

Որդյակ իմ, ուշադի՛ր եղիր իմ խոսքերին և ակա՛նջ դիր իմ ասածներին: Թող նրանք չհեռանան քո աչքերի առջևից, դրանք քո սրտի մեջ պահիր, Որովհետև նրանք կյանք են դրանք գտնողների համար և բժշկություն՝ նրանց ամբողջ մարմնին (Առակաց 4.20-22):

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ